



### 30. ԾՈՎՈՒ ԱԽՉԻԿ

ՄԵԿ ԻԱՐՈՒՍԱՄ ՄԱՐԹԸՄ ԿԵՆԻ, ԵՆՈՒ ՄԵՂՋԱ ԿԵՆԻ. ԿԸ ՄԱ ԴՐԱՑ-  
ՐՈՇ՝ ԿԱՐՄԱՆ:

Յոր Մարի Ուսում կառին: ՄԵԾ ՄԵՂՋԵՆ ԿԸ ՄԱՆԱՆԱ, ԿԸ ԳԱ  
ՄՈՒՆ: ԿԸ ԳԱ ՄՈՒՆ, ԿԸ ՄԵԽՆԱ, ՕՐ ԵՆՈՐ ԽԵՐ ԱԿԱՐԸՄ պիրեր ա,  
զարկե պատ:

ԽԵՐ ԻԱՅՐԻԿԻՆ կասա. - Եսա ԱԿԱՐԻՆ ՄԵՐ ընծի պիտի պի-  
րես:

ԽԵՐ կասա. - Եսա պատկերքի ՄԵՐ չըմ գիտի վո՞ն ա, իս  
գյընիր եմ մեկ հարուստ թիւզոից:

- ԱՆԿԱՐԵԼԻ ա, յա՞ն ՄԵՐՔԱՍ պիրես, յա՞ն ես ՄԵՐՔԱՄ է՛ն  
մարդու մոտ, որից տիւ գյըներ ես:

ԽԵՐ ԻՆչըլս օր կենա, չեղիր: Տըղեն կելնի, կերքա է՛ն թիւզոի  
մոտ, օր խեր մոտեն Ակար առեր եր:

Թիւզոին կասա. - Եսպես Ակար մ' ես տվե իմ խոր, եսա  
Ակարի ՄԵՐ ծի ցուց ՄՈՒՐ:

Թիւզար կասա. - Զավակ, եսի Ակար ա, ըՍտամբիլա են  
ճամբած ծի:

Տըղային ինչքան օր կը համոզա, չեղիր, ՄԵՂՋԵՆ կելի, կերքա:  
Տըղեն կելի, կերքա ըՍտամբիլա թիւզոի մոտ:

Կասա. - Ես Ակարի ՄԵՐ ծի ցուց ՄՈՒՐ:

Կասա. - Զավակ, եսի Ակար ա, ես էտոր ՄԵՐ ո՛ր ՄԵՂՋԵՆ քյե  
ցուց ՄՈՒՐ: Գամուչիք պերին ժախեցին, ես էլ առի:

- Ես կը խընտրիմ՝ ե՞ն գամուչիք ծի ցուց ՄՈՒՐ:

- Գյընա՛, ֆըլան գամուչին խարցու, ես ԵՆՈՒ մոտեն եմ առե:

Կերթա գամուչոց մոտ:

Կասա. - Գամուչի՞ք, ես կը խընտրիմ՝ եսա նկարի տեր ծի ցուց տաք:

Կասա. - Իզուր ա, քյե շանց տանքյ էլ, տիւ չըս կանա պիրի, թո՛ղ, գյընա՛ քիւ տուն:

Կասա. - Ես կը խնտրիմ՝ ծի ցուց տաք, թող ես չըկանամ:

Գամուչի՞յն էլ կասեն. - Սենքյ գացինքյ ծովու մեչ, գամին երաց ֆըռթունա, տարավ էտա ծովու միջու կղզին: Գամին կանավ էնտեղ, մենքյ էլանքյ տիւս, էնտեղ մեկ շենլիգօմ կեր: Ետ շենլըգյ մեչ մեկ ախչիկօմ կեր, ըտ նկարն էն ախչըկե նկարն ա: Չուր տուր պացինքյ, գացինքյ, ախչիկ կուրիսավ: Էլ չըգյիտցանք փարի՞ եր, ի՞նչ եր:

Տըղեն էլ կավ, ճամբախ ինգանվ, գյընա՛:

Ճամբախ մեկ խալիվոր մարք մ' եկավ հառեծ, ասավ. - Դայ, տըղա՛, տիւ դի՞ր կերթաս:

Ասավ, թե. - Ետա նկարի տիրոչ հիտև տ' երթամ:

Ասավ. - Ետա ճամխուվ օր տիւ կերթաս, կընգի դներու երկիր:

- Ապա ի՞նչըլս էնեմ, ո՞ր տեղվեր երթամ:

Ասաց. - Օր կերթաս, էտա ճամխի վըրեն երկու դեկ կը կովին: Առ երկու տիկ գյինի, երկու տիկ երաղի, երկու տիկ էլ խաց, միս, կերակուվ: Տար էն երկու դեկ մոտ: Էն դներ եսա յոր տարի կը կըռվին, գիրար չըհաղթած: Ետա գյինին ու միս տուր էն Սիվտակ դնուն, էտա խացն ու կերակուվ, երաղին տուր Սև դնուն: Օր ուտին, էտ Սև դեկ կը սարիսոշնա, էտ Սիվտակ դեկ էնու կը հաղթա: Ինչ ուզես, քյե կը տա: Թե էն քյե ճանապարհմ ցուց տա էտա նկարին:

Տըղեն առավ միսը, կերակուվ, գյինին ու երաղին, տարավ դներուն: Միս ու գյինին էտուր Սիվտակ դնուն, երաղին ու կերակուվներ էտուր Սև դնուն: Սև դեկ սարիսոշցավ, Սիվտակ դեկ Սև դնուն հաղթեց:

Սիվտակ դնուն ասաց. - Դե՛, տըղա՛, ուզա՛, քիւ ուզած տամ:

Տըղեն էլ նկար ցուց իսուր, ասաց. - Ետա նկարի տեր կուզեմ:

Ասավ. - Գընա՛, իմ քիւր գիւ վըր ճամխին, էնոր ծըծվեր թալե վըր թիվերուն: Նետուր գյընա՛, իմ քիւրոչ ծըծեր ծըծա:

Տըղեն էլ գյշնաց, ենոր քհւր նըստեր էր վեր ճամխին, ծըծեր թալեր էր վեր թիվերուն: Պըտուկ առավ պերան, ծըծեց:

Ասավ. - Խողածին, տիւ ըստե՞ղ: Խավըն ենոր թևով, օցն ենոր պոտով չըր էկեր էր ըստեղ, տիւ ի՞նչըլս ես էկեր ըստա:

Ասավ. - Իմ կըսմաք էկեր ա ըստա:

- Աղեկ,- ասաց,- իմ ատամ կը ցավի, ես քհւ վիզ քաշեմ, քհւ արնով իմ ատամ դանիմ:

Ասավ. - Չէ՛, քհւրիկ, ես եկեր եմ քյե ակընջկըլա տալիւ:

- Ղե՛, շո՛տ ասա, քանի քհւ վիզ չըմ քաշեր:

Ասավ, թե. - Իմ ակընջկըլեն են ա, օր քհւ ախաբեր Սիվտակ դև Աև դեսուն հաղթեց:

Ասաց. - Քհւ ակընջկըլեն հընդհւնակ ա: Նստի իրիք օր: Նորեն ի՞նչ կուզիս, քյե կը տամ, գյշնա:

Նստակ, խաց կերավ: Իրիք օր մնաց: Սիվտակ դև էկավ:

Սիվտակ դև քհւրոչ ասաց. - Եսա մարթն ի՞նչ օր կուզա, տո՛ւր:

Քհւր ասավ. - Եսա իրիք օր էկեր ըստեղ, դըհա պա՞մ չուզեր:

Ասավ. - Ղե՛, տըղա՛, քհւ ուզած ուզա՞:

Ասավ. - Իմ ուզած եսա նկարի տերն ա, ծի ցուց տաք:

Ասավ. - Ես չեմ գյիտի, գընա իմ ճյոչ քհւրոչ մոտ, գի վըր ճամխին, ենի քյե ցուց կը տա:

Սիվտակ դևս ասաց քհւրոչ. - Ապա եսա տըղին մեկ նըվերը չըկա՞՝, տաս, ծի ենչափ աղեկութեն երեր, գյինի, միս էտուր:

Ասավ. - Պա՞մ չըկա՞: Յերեկ ես գացի ծովափ, են ծովու միջու ախչըկներ սոլեր խագած, տրվին վըր ծովուն, էկամ, կը խաղին: Ես գացի՝ փախան, ըն մեկի սոլեր առեր, էկեր եմ: Ենու սոլեր մե հարմար չի գա, տամ ենոր:

Սոլեր իտուր, ասաց. - Օր կերթաս՝ իմ քհւր գի վըր ճամխին ա, էման ծըծեր թալե թիվերուն, հետևանց գյընա՛, ծըծա՞:

Գյընաց, տեսավ՝ քհւր նըստեր էր, ծըծեր վըր թևերուն: Գյընաց հետևանց, դևու ծըծեր ծըծեց:

Դև ասաց. - Տհի վո՞ն ես, էկեր ես ըստա: Խավըն ենոր թևով, օցն ենոր պոտով չըկանա գա ըստա, տիւ ի՞նչըլս ես էկեր:

Ասավ. - Լա՛վ, եսա յոր տարի ա՝ իմ ախաբեր կըոիվ կենա, քյե կանիմ խորված, կը ճամխեմ ենոր:

Ասավ. - Չէ, ես իկեր եմ, քյե ակընջկըլա կը տամ:

Ասավ. - Դե՛, շո՛տ ասա, քանի չըմ մոռեր:

Ասավ. - Իմ ակընջկըլեն էն ա՛ քհւ ախապեր Սև դևուն հաղթեց:

Ասավ. - Քհւ ակընջկըլեն հընդիւնակ ա: Նըստի երկու-իրիք օր, խաց կե, նորեն ինչ կուզես, ուզա՞:

Խաց կերան, իրիք օր նստավ, նոր Սիվտակ դևն էկավ:

Դև ասավ. - Եսա տըղին ճանապարհի չը՞ս տըղեր: Պա ՚մ չուզե՞ր:

Ասավ. - Չէ, եսա իրիք օր ա իկեր ա ըստեղ, պա՞ ՚մ չուզեր ա, նոր տ՛ուզա՞:

Ասավ. - Տըղա՛, ուզա քհւ ուզածն:

Ասավ. - Իմ ուզածն էն ա՛ եսա նկարի տեր ծի ցուց տաս:

Ասաց. - Ետի գյընա իմ մոր մոտ, իմ մեր քյե ցուց տա, իմ գոռծ չի:

Տըղեն էլավ ճանապարհի, դև ասաց էնու քհւրոչ. - Ապա նըլվեր, պա՞ ՚մ չըկա՞՝, տաս եսա մարդուն, ծի շատ լավութեն ա երի: Միս, գյինի ետուր ծի, կերա, Սև դևուն հաղթեցի:

Ասավ. - Ի՞նչ տամ, հերեկ ես գացի ծովափ, փառիք ընտեղ կը լողկընեն: Փախան, էն մեկի գյըլխանոց առեր եմ, էկեր եմ:

- Լավ ա, տուր էնոր:

Ետուր տըղին, տըղեն էլ առավ ըզգյըլխանոց ու էլավ ճանապարհի:

Դևի քհւր ասաց. - Մոհլով քյելա, քյե պա՞ ՚մ ասեմ: Օր կերաս, իմ մեր նըստեր ա վըր ճամխին, էնու մազեր կը սանտըրա: Էնու հըմեն մեկ մազ խընձ կարպետըմ կա: Օր երաս էնտեղ, համա շոտեն ասա՝ քյե մուժդի եմ պերեր: Զեղսի քյե շոշոտ ճըղ-ճըղա:

Տըղեն էլ գյընաց, տեսավ մեր նըստի՝ խընձ ճյոչ կոնըմ կա: Մազեր էնպես թալեր վըր թևերուն, հըմեն մազ խընձ կարպետըմ:

Տղեն էլ գյընաց, օր տեսավ, ասաց. - Մայրիկ, քյե մուժդի մեմ պերեր:

Ասաց. - Դե՛ շոտ ասա, քհւ մուժդեն ի՞նչ ա, թե չէ՝ քյե կերա:

Ասաց. - Իմ մուժդեն էն ա, քհւ լամ՝ Սիվտակ դև, հաղթեց ըզսև դեվ:

Ասաց. - Արի՛ նստի:

Գյղնաց, Արստավ դևու կըշտին:

Դևա ասաց. - Դե՛, ուզա՞ք քիւ ուզած: Խաց կեր, քանի մօր կա՛ց, նոր քիւ ուզածն տաճ, գյղնա՛:

Խաց կերավ, իրիք օր մնաց, նոր Սիվտակ դև էկավ:

Դև էկավ, ասաց. - Մայրիկ, եսա տըղին հեչ նըվեր, պա՛մ չը՞ս տըվեր, քյենե պա՛մ չուզե՞ր:

Ասավ. - Իկեր ա, չում մըկա չուզեր, նորեն տ՛ուզա:

Ասաց. - Դե՛, տըղա՛, ուզածն ուզա:

Ասաց. - Եսա նկարի տեր ծի ցուց տաս:

Ասաց. - Ետա նկարի տեր գի ծովու կղզու մեջն ա: Էտի փարիներու թագավորի ախչիկն ա: Օր տիւ էկար, իմ ախչըկներ հեչ քյե նըվեր չըտըվի՞ն:

- Նըվեր են: Են մեկ ախչիկ ջուխստըմ սոլ ա տըվեր, են մեկէ ախչիկն էլ գյըլխանոցըմ տըվե:

Ասաց. - Տու, տեսնամ ի՞նչըլս են:

Եխան էտուր: Իշկեց:

Ասաց. - Տըղա՛, եսա սոլ օր խազիս, տաս վըր ծովուն, չըս խըրքեր ծովու մեչ՝ ինչըլս գյետին քյելես, ընցկուն վըր ծովուն քյելես, կերբաս: Ետ գյըլխանոցն էլ օր տընես, որտեղ երբաս, քյե չըն տեսնար: Տհի կերբաս, ետ սոլեր կը խազիս, կը տաս վըր ծովուն, ետա գյըլխարկն էլ կը տընես, օր մարք քյե չըտեսնա: Առ ենա սանտըրն էլ խը քյե, առ ենա առծըլին էլ խըն քյե: Եփ օր կերբաս, ծովու կղզու մեչ շենլիգըմ կա, եր ախչիկ գի ետա շենլըգի մեչ: Եր ախչըկն էլ չորս խատ խալայեղ կա հառեծ: Են ախչիկն էլ տղայի՛ն խետ նշանվեր, ամա տել չըփսակվեր ա: Իմ մատնիկն էլ տաճ խընք քյե. Եփ օր տառնաս, պե՛ր, տու ծի, չըտանիս խընդ քյե:

Դիր Սիվտակ դև ասաց. - Տըղա՛, տիւ կերբաս, ա՛ռ իմ ենա մազեր, եփ օր նեղ ընգիս, կը տաս կրակ, ես քյե կը խասիմ:

Տըղեն էլ տառոցավ, դևու մոր ասաց. - Մայրիկ, ենա սանտըր ինչի՞ խամար ա:

Ասաց. - Են սանտըր, եփ օր կերբաս, են ախչիկ կը պերես, հիմնան, ընզեն քիւ հիտև, սանտըր հիտուց թալիս, կեղի մեծ պըրակըմ մըչ քյե, մըչ քիւ տիւշման, էլ քյե չըն տեսի:

Ասաց. - Են առծըլին ի՞նչ տ՛ենես:

**Ասավ.** - Եթե օր պըռակից պըռօծեն, գան քհւ հետև, առօղլին օր քալիս քհւ հետևեն, զյետին ամբողչ կեղի խանչալ, թուր, տուր պան: Ենոնք օր գան, էնոնց օտքեր կարօնի, չըն կանա քյե խասի: Դև գյընա: Ախշիկ կը տեսիս:

Տըդեն է գյընաց: Սոլեր խագավ, ետուր վըր ծովուն:

Դևու մեր կանչեց. - Կանի՛, քյե մատնիկն էլ ցուց տամ:

Տըդեն տանօցավ, էկավ:

**Ասաց.** - Տըդա՛, ետա մատնիկե մարհիֆարն էն ա, եփ օր կերթաս էն տեղ, ախշիկ կը տեսնիս, ետ ախշիկ քյե չըսիրա: Դամա եփ տա մատնիկ շանց տաս, քյե կուզա:

Տըդեն սոլեր խագավ ու ետուր վըր ծովուն, գյընաց:

Տըդեն գյընաց կողու մեջ, տեսավ օր շենլիգյըմ կա էն տեղ: Փանջըրեք վեր վեր իշկեց, տեսավ օր էնու նկարի տեր գի տան մեջ:

Էն գյըլխանոց իտիր գյըլիխ, մըտավ տան մեջ: Եփ օր կերակուլ պերին էն ախըլկեն, էնու չորս խալայեղներն էլ նստած խընդ ախըլկան, կուտեն: Լաճն էլ նստավ, չանախի ըն մեկ կողմեն էլ ինքյ կուտա:

Ետ ախշիկ և ետ խալայեղոյեր գարմացան՝ ետա կերակուլ վո՞ն ա կուտա, մընքյ չընքյ տեսնար:

Ախշիկն ետոր խալայեղներուն ասավ. - Եսի ի՞նչ պան ա, կերակուլ կուտեն, մընքյ չընքյ հիմնա:

Մընաց էն մյուս օր, գինան էնապս: Ախշիկն ջհւար ետուր ուր նշանածին. «Չեղի՝ թե տիւ աներևութ քոլոց տըրած ես, կը գաս խըն մե, խաց կուտիս, մընքյ չընքյ տեսներ»:

Նշանած էլավ, էկավ տուն:

Նշանած ասաց ախըլկեն. - Ես չեմ ետ պան երող, եմի ի՞նչ պան ա՝ տիւ կասիս:

Էն էլ մընաց էնտեղ: Էն օր էլ խաց կերան միասին:

Տեսան, օր գինան մեկըմ ծածուկ էկեր, խաց կուտա:

Նշանածն էլ գարմացավ:

**Ասաց.** - Շատ կարելի է, օր տիւ ծի չըս սիրեր, ուրիշ յար մ՝ ես պըռոնե, կը գա ըստեղ՝ մը թե:

Ախշիկ ասաց. - Չէ, ես խարար չեմ ետա պանից:

Տըդեն էլավ, հըռըկավ, էլավ, գյընաց ախըլկե մոտեն:

Ետա ախչիկն էլ ասավ. - Խացի՝ կերող, տիւ, քիւ Աստված, տիւ վո՞ն ես, ի՞նչ ես, տիւ զի՞նս ես, տիւ քյե շանց տաս:

Տըղեն ծեն էտուր, ասաց. - Քիւ խալայեղներ խան տիւս, ես խըն քյե գըրուցեմ:

Խալայեղներ մըլեց տիւս:

Խալայեղներ էլան, գացին մըտ ախչըկա նշանած, օր պատմեն քե՝ խացի կերող ծեն էտու ախչկեն:

Տըղեն ենոր գյըլսանոց տակ առավ, էլավ հերևան, նըստավ, կը խոսա:

Ախչիկ ասաց. - Տիւ զի՞նս ես, հիսա՞ն ես, ասա՞՝ տիւ ընչի՞ ես էկած: Տիւ ի՞նչ ես դըրու քիւ գյըլիխ, օր ես ջըտեսներ քյե:

Ասավ. - Ետա մը խացըներ, ես քիւ խետ գործ ունիմ:

- Ասա՞՝ ի՞նչ ա քիւ գործ:

Ասավ. - Իմ խեր ծի ետուր դըպրոց: Յոթ տարի դըպրոց մնացի: Էկա տուն, եա քիւ նկար տեսա մըր տան մեջ, ես էլ քիւ սիրուն էլեր, էկեր եմ քյե կընդընելու:

Ասավ. - Տիւ հիսան ես, ես փառի եմ, ի՞նչըխ կեղի:

Ասաց. - Եղի՛, չեղի՛, տիւ ծի ուզես, չուզես, գք ես իկեր եմ հիտիվ քե:

Ասավ. - Չեղի՛ր, ծի նշանած ան, արի իմ ծառեքըներուց մեկ տամ քյե:

Ասաց. - Չեղի՛ր, ես քյե կուզեմ, հիւրիշ օր լուս եղնի, չը՞ ուզիր:

Ասաց. - Ես քյե չը՞ն սիրե, էլի՛, գյընա՛, քանի փառիք չէկած. քե կը սպանեն:

Տըղեն էլավ, տ'երթեր տիւր պաներ, միտ ընգավ մատնիկ, էխան, ընցուց մատ:

Տառցավ ախչըկեն, ասաց. - Տիւ ընչի՞ ծի չըս սիրեր:

Մատնիկ շանց իտու:

Եփ օր մատնիկ շանց էտուր, ախչիկ ասաց. - Տըղա՛, տառցիր արի, մ'էրբա:

Տըղեն տառցավ: Տըղեն ու ախչիկ ծեռ քալիցին հիրարու, նըստան են տեղ: Ենքան, օր տըղեն ախչըկեն կը սիրեր, իրեր ենքան էլ ախչիկ տըղին սիրեց:

Ախչիկ տըղային ասաց. - Ես փառի, տիւ հիսան, ինչպե՞ս պիտի իրարու խետ ապօրվինք:

- Ես հարուստի տըղա եմ, քյե կառնիմ, կերպամ մեր երկիր,  
իրարու խետ կապըրվինք:

- Եսա ծովն ի՞նչըլս տ՛ընցընինք, էրբանք:

Տըղեն ասաց. - Ես ունեմ ընցկուն սոլեր, օր կը խագիմ, կը  
տամ վզր ծովուն, չըմ խըրվեր մըչ ծովուն:

Տըղեն ասավ. - Ապա տիւ ի՞նչըլս տը գան, եսա ծով ընցնիս:

Ախչիկ ասավ. - Իմ խանգիստ ա. Ես էլ կելնիմ եղվընիկըմ,  
թըոյիմ վեր քհւ թևերուն, էրբանք, իմ խանգիստ ա:

Էլան, էկան, ախչիկն եղավ եղվընիկըմ, թըօավ տըղի թևե-  
ռուն, տըղեն խոռ վզր ծովուն, էկան:

Դէկան, ծով ընցան: Տել չեր խասած դեկի մոր մոտ, մեկ էլ էն  
ախչըկե նշանած առավ ուր հինգըրներ, ընգավ հետևեն: Էկան,  
էնոնց մոտեցան: Տըղեն մտածեց, ուր առօլին հետևուն էրալ:  
Սար, քար եղավ խանչալ, թուր: Էտոնք էկան, տըղին վերեն,  
ուրենց օտներ կըտըրվավ, արուն էտու վզր օտներուն: Չում  
էնոնք ետա թըրերուց, խանչըներուց պըոծան, տըղեն ու ախչիկ  
սահարի՞ն ճամրախ զատացան:

Մեկ էլ տըղեն տեսնա, օր ընգած ան, հետևեն կը գան:

Էկան, մոտիսցան տըղին: Տըղեն էրալ սանտըր, տաղցավ  
մեկ մե՛՛նօք պըրակըմ: Էնոնք ընգան պըրակի մեչ: Տըղեն ու  
ախչիկ շատ հեռցցան:

Մեկ էլ տեսնա օր չէ՝ ետ մարթեր գինա պըրակի մինուց  
էլան, էկան: Էկան, մոտեցան, տըղեն Սիվտակ դևու մազ ծոցեն  
էխան, էտուր կրակ, Սիվտակ դև էկավ, խասավ:

Ասավ. - Տըղա՛, ի՞նչ եղավ քյե, ի՞նչ նեղ վիճակի մեչ ես  
ինգե:

Ասավ. - Ես գյընացի, նկարի տեր պերի, ախչիկն նշանվեր  
ա, նշանածն ընգե մեր հետև, չընք կանա ազատվի ժեռնեն:

Ղե հանեծ պըռնեց, ըսկըսեց կովել խետքեր: Ես էլ առավ  
ախչիկ, էկան դևու մոր մոտ:

Դևու մեր ասավ. - Տըղա՛, քհւ ուզած պերի՞ր:

Ասաց. - Պերի, մայրիկ, գի իմ խետն ա:

Ասավ. - Ապա իմ տըղեն ի՞նչ եղավ, օր էկավ ծըր հանեծ:

Ասավ. - Եսա ախչըկե նշանածի խետ կը կըօվին:

Ասավ. - Դա՛յ, տըղա՛, տիւ իմ տըղեն կըօվուց մ'ազատեցիր,  
տարար թողիր կըօվու'մ մեչ մ' էլ: Պըօվավ՝ պըրվավ, ես կարող

Եմ իմ տղողեն ազատեմ էն տեղեն, ընոնքյ փարի են: Տհւ կերպաս, տղոա՛, իմ մատնիկ տո՛ւ, տիւ գյընա:

Տղողեն ասավ. - Չէ, մատնիկ օր տամ, վախենամ իմ կնիկ գինա ծի թողնի, էրբա:

Ասավ. - Չէ, էնոնքյ փարի են, օր մի անգամ էնոր խոսք տուր, էլ երբեք չ'էրբար:

Մատնիկ էտուր դևու մոր, առավ ուր կնիկ, էկավ:

Չատ էկավ, ջիշ էկավ, էկավ խասավ ուր խոր քաղաքյ:

Ախչիկ ասավ. - Տղոա՛, թե ես եսպես ախչըկի կը լողով էրբամ, իմ լիւս տը տա էսա քաղաքյ, կարելի է օր հիւրօյմաք ըլնի, ծի քիւ ծեռնեն առնի:

Ասավ. - Ինչպես կուզես, էնպես էրբանքյ:

Ասավ. - Ես կեղիմ եղվընիկըմ, տիւ էլ էտա աներևութ գյըլսանոց տիր քիւ գյըլիխ, ես կը քառիմ քիւ թիվին, կերբանքյ:

Են էլ աներևութ գյըլսանոց իտիր, գացին տուն: Տեսավ, օր էնու խեր մառախից խիվընցե, պառկեր էնոր նըվընի մեչ:

Տղողեն ախչըկեն ասավ. - Իմ խեր եսպես խիվընցեր ա, ի՞նչ էնենքյ:

Ասավ. - Ես թերուոզմ կը քաշեն իմ թևից, տիւ թարխա՛ ճըրիւ մեչ, թոխ տան ըն ճհւր, քյո խեր խըմա:

Են էլ թերուո քաշեց, էտուր տղողին: Տղողեն էլ աներևութ գյըլսանոց գիւ գյըլիխ: Եփ օր ինոր խեր ճհւր կուզա, տղողեն թերուո կը քարխա ճըրիւ մեչ, ժառեր էտա ճհւր կուտան, խեր կը խըմա:

Խեր կը ժըրի:

Ախչիկ տղողին կասա. - Ինչպե՞ս տ' էնինքյ, օր մենքյ ըստեղ աշքարա ելինքյ:

Տղողեն ասավ. - Տհւ գյիտիս, քիւ գյիտցած էրա:

Ախչիկ ասավ. - Նամակըմ գյըրա, ասա՛ հայրիկ, շնպանք օր մենքյ տը գանքյ քյե տեսնըվինքյ՝ ես ու իմ նշանած:

Տղողեն էլ նամակ կը գյըրա. - Հայրիկ, ես գյընացի, իմ նկարի տեր կը ընդա, պերի:

Տղողեն կառնի նամակ, կը տընա խոր տեղաց վերեն: Խեր օր նամակ կառնի, կարտա, կը զարմանա:

Են մյուս ախպիր կը կանչա, կասա. - Տղոա՛, արի տեսնանքյ էսի ի՞նչ նամակ ա, քիւ ախպոր նամակն ա, էսի ո՞ն եպեր:

Ախապեր կը գա, նամակ կը կարտա: Նամակի մեջ գյուղած էր, թե՝ հայրիկ, տիւ հիմանաս՝ իմ նշանած առեր եմ, կը գամ, շնպար օր քյե խուր իմ:

Ախապերն էլ կը զարմանա, թե էս նամակ ո՞՛ ա ուղարկեր ըստեղ:

- Երանի թե իմ տըղեն անգամ մ' էլ գյեր, ես տեսներ, թըխ ես մեռներ:

Ախապերն էլ ասաց. - Յայրիկ, չում շնպար օր աչկենք, խենք ինչպե՞ս տ' եղի՝ սուր ա, աղորք ա:

Չում շնպար օր էնոնք ըսպասեցին, տըղեն էլ գի էնտեղ ականջ կենա, բայց չըն տեսնա:

Տըղեն գյոնաց ախչըկե մոտ, ասավ. - Ինչպե՞ս էնենք, իմ խեր, իմ ախապեր նամակ կարտացին, շատ ուրախցան, համակասին, թե՝ չըլնի՝ սուր եղի:

Ախչիկն էլ ասավ. - Շնպար օր հիրիկուն կերպանք:

Էտ վաճառական էլ ուր ծառամերուն կը պատվիրա՝ հազըր կացեր:

Էտոնք էլ հազըր կը մընան, կը տեսնան հիրիկուն, օր մեկ մարթըմ, մեկ կինըմ գի էնտեխեն եկան, լիւ մ'էլ գի էտոնց հառենեն կը գա:

Ծառեց մեկ մաս կերպան հառեճ, մեկ մաս կը գան խոր ակընջկըլա կը տան, թե՝ եսպես պա մ'էկավ:

Խերն էլ կէլնի, ուր տըղերըներով կերպա հառեճ, էն էլ կը տեսնա, օր լիւս տըվեր ա ճանապարհին, կը գան էն կողմեն:

Կերպան, կը խասին, կը ճանչընան, թե ուր տըղեն ա:

Տըղեն, խարս խոր ծեռ կը խամբուրեն, խեր էնոնց կը խամբուրա, կառնի, կը գան տան մեչ:

Էկան տան մեչ, տեսան ախչըկեց լիւս կէլնի, էտա ծառեց չըն կանա իշկի, լիւսկց ամոր կէլնի, ետ կը տանոնան:

Խերն, էնոնք նըստան, զըրիւցեցին, խաց կերան, զըրիւցեցին:

Խերն էլավ, վեց օր, վեց գյիշեր խարսնիս էրաց:

Էտա ախչըկա լիւս փանջարեց վեր կը տա քաղքյին: Էտ քաղքյի փաշեն ուղարկեց թե՝ էս ի՞նչ լիւս ա՝ քաղաքյ հըմեն լիւսցիցի:

ճամիսեց, գացին խառընեցին:

Վաճառական ասաց. - Մեր տուն պահմ չըկա:

Տաղան, գացին, ասին թե՝ վաճառական կասա՝ իմ տուն պահմ չըկա:

Փաշեն ասաց. - Են ի՞նչ սուբասան մարթ ա: Չէ՞ զի մենք աշքնով կը տեսնենք:

Եկան, վաճառական տարան:

Փաշեն վաճառականին խաղցնեց, թե՝ եսա ի՞նչ լիւս ա քիւ տան մեջ:

Ասաց. - Փաշա՛, իմ տուն իեզ պահմ չըկա: Մենակ ես իմ տըդեն եմ փսակե:

Փաշեն ասաց. - Ծա՛տ լավ, տիւ գյընա՛, ես կը գամ, կաչքեմ:

Մարրն էլ եկավ տուն, ասավ. - Փաշեն ծի կանչեց, եսպես խաղցըմ ծենե երաց:

Տըդեն էլ ասավ. - Ծա՛տ լավ, ես իմ կընգան խաղցընեմ:

Տըդեն կընգան խաղցուց, թե. - Փաշեն եսպես ասեր ա իմ խոր, ինոր ի՞նչ պատասխան տանք:

Կնիկն էլ ասաց. - Թը գա, տեսմի, տանա, երթա:

Մընաց հիրիկվան: Վոլին առավ ենոր ընգերներ, եկավ: Եկավ, տիւր տրվեց, տիւր պացին:

Եկան ներս, եփ օր փաշեն ետա կընգան տեսնավ, խելքյ գյըլսուց գյընաց, ոչ կարցավ զըրուցեր, ոչ երթալ, ոչ գալ: Շաշմիշ եղավ, կայնավ ընտեղ:

Փաշի ընգերներ ծեռքյեր պըօնեցին, խանին տիւս, տարան ուր տուն:

Քիչ մընաց, փաշի խելքյ եկավ վերեն:

Ետոր ընգերներ խաղցընեցին. - Փաշա՛, տիւ քիւ խելքյ ընչյ՝ թըռուցիր:

Փաշեն ուր ընգերներուց կը խաղցնա. - Են ի՞նչ տեսակ խսան եր, փարի՛ եր, իմ խելքյ իմ գյըլսուց գյընաց, ես չըմ գյիտնա՝ ի՞նչ էլավ:

Ընգերներ ասին. - Մենք էլ չիմացանք՝ ետի ի՞նչ եր:

Վոլին էլավ, թելկըռաֆ մ'ուղարկեց թագանվորին, թե եսպես խրեղեն կին պիրած ա ֆլան վաճառականի տըդան, լիւս կը տա քաղցյին:

Թագանվորն էլ էլավ, ճամխեց. - Ետա ախչիկ կառեք, կը ճամխեք ծի:

Վոլին ճամխեց թհւզորի մոտ, ասաց. - Թագավոր քիւ խարս ուզեր ա:

Թհւզար ասաց. - Իմ տըղին ասեմ, նորեն ծե պատասխան տամ:

Տըղին կասա. - Զավակս, թագավոր քիւ կին ուզեր ա, ի՞նչ կասես:

Տըղեն ասավ. - Ես իմ ընդամիքին կը խառընեմ, քյե պատասխան կը տամ:

Եկավ, կընգան ասաց. - Թագավոր քյե ուզեր ա, ի՞նչ պատասխան տանք:

Ասավ. - Գյընա՛, ասա՛ վոլուն, վով ի գացող, թը՛ գա:

Տըղեն խոր պատմեց, խերն էլ գյընաց, վոլուն ասաց:

Վոլին էլ մարթեր ճամխեց, թե՛ գացե՛ք, առե՛ք, պիրե՛ք:

Մարթեր գացին, տիւռ պացին, էտոնց խելքը գյըլսիւց գյընաց, էլան հայվընի կայդա, չըկարողացան պա մ'ասեն:

Գյընացին վոլին մոտ, ասին. - Մեր խելքը մեր գյըլսիւց գյընաց, չըկարոցանք պերենք:

Վոլին էլ կասա. - Ապա թագավորի պատասխան ի՞նչ տանք:

Կէլմի, թագավորուն ջիւյար կէնա. - Մեր խելքը մեր գյըլսիւց կիյա, չընք կանա իրիշկա էն կընգան հիրես:

Թագավոր կասա. - Օր էտպես ա, էտոր մարթ թող առի՛, գա՛:

Ճամխին թհւզորին, թե՛ էտպես ա թագավոր հրաման արեր, թե՛ քիւ լաճ թ' առնի ուր կնիկ, գա՛:

Վաճառական էլ կը գա, լաճուն կը պատմա թագավոր հրաման:

Լաճն էլ կասա. - Շատ լավ, մենք կէրթանք:

Տըղեն կընգան կասա. - Թագավոր մե ուզեր ա, էրթանք, խենք՝ ի՞նչ տ'էնա, քյե ծըզնից տ'առին, չառին:

Խարսն էլ ասաց. - Վոլուն ասա՛ մենք ոտնով չընք կանա էրթա, մե փայթոն թող ուղարկա:

Վոլին փայթոն կուղարկա, կը նըստին փայթոն մեչ, կէրթան թագավորի սարի հառեմ:

Թագավոր մեկ սենյակըն պատրաստե:

Էտոնք օր կէրթան, լիւս կը տա թագավորի սարի վըրեն:

Կերպան, կը նըստին սենյակի մեջ: Են տեղն էլ վո՞ն օր կերպա տեսութեն, խելք գյուլսուց կերպա, կը տառնան հայվընի տեսակի:

Թագավորն էլ ուր վոզիրներ կը կանչա. - էկե՞ք, խենք՝ ի՞նչ էնենք, չընք կարող երբա տեսության:

Վոզիրներ էկան, թագավոր ուր վոզիրներ ճամխեց, ասաց. - Գացե՞ք, խենք՝ տիւք էլ ընպե՞ս եք, ծեր խելք էլ տ'երբա" ծըր գյուլսուց:

Վոզիրներ գացին, ինոնց խելքյն էլ գյոնաց, էլան, անասունի տեսակ տնացան:

Վոզիրներ ասին. - Էսա ախչիկ էն տըղին ա կըսմաք, Աստվածութեն էնապս ա հրաման էրե:

Թագավորն էլ ասաց. - Թըդ մընան իմ սարեն, իմ տընից ապրովեն, թը լիւս տա վըր մեր քաղքյին:

Քանի՞ն ժամանակ էնտեղ կապորվին, տըղեն ախչըկեն կասա. - Ի՞նչըն էնենք՝ էս տեղեն երբանք:

Ախչիկն էլ տըղին կասա. - Ախօր չէ" քիւ խետ աներևութ գյուխանոց կա, թուխքըն գյորա, գյորա՝ թըխ մեզ ճամխի. Գյուխանոց տի՞ր գյուհիստ, տա՛ր, էն թուխք էնոր սենյակի պատ զա՞ր:

Թուխք կը գյորա, կը տանի զանա պատ, թագավոր կը կարտա, կը զարմանա, թե՝ էսա թուխք վո՞ր եպեր, մարթ չըմտավ իմ հոդեն:

Թագավոր ուր նիրաքեներուն կը խառցընա, թե՝ էսա թուխք վո՞ն իպեր, չըտեսա:

Կարակոլներ կասեն, թե՝ մենք մարթ չընք տեսեր ա:

Թագավոր կը մըտածա, կասա. - Էտոնց թողնեմ երբան, իմ գյուհիսն էլ մեկ օյին չըխաղան:

Թագավոր կը պիրի, էտոնց կը խալաթի, կը ճամխա, կերպան ուրենց հայրենիք:

Կը գան ուրենց հայրենիք, էտ տեղ քանի՞ն ժամանակ կապորվեն, փարին չուզեր էն տեղ մընա, իրկան կասա. - Արի՛, երբանք մեր երկիր:

Ըգտըղեն կը համոզա, կառնի, կերպա ուր երկիր:

Ինոնք կը խասնին ուրենց մըրազին, տիւն էլ՝ քիւն: